


1.2.6. Կ ա պ

Հայաստանի Հանրապետությունում 2004թ. հունվար-սեպտեմբերին բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցած կապի ծառայություններից ստացված հասույթի ընդհանուր ծավալը ընթացիկ գներով կազմել է 48628.2¹ մլն.դրամ, որը 2003թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ համադրելի գներով աճել է 20.0%-ով: Նշված հասույթից բնակչությանը մատուցված ծառայությունների բաժինը կազմել է 26100.4մլն. դրամ, որը 2003թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ համադրելի գներով աճել է 18.7%-ով:

Կապի գործունեությունից ստացված փաստացի հասույթի կառուցվածքը

	2004 թ. հունվար-սեպտեմբեր		2004թ.հունվար-սեպտեմբերը 2003թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, համադրելի գներով, %
	ընդհանր.	այդ թվում՝ բնակչությունից	
Կապի գործունեությունից ստացված հասույթը, ընդամենը մլն. դրամ	48628.2	26100.4	120.0
<i>այդ թվում՝</i>			
փոստային կապից	1181.6	262.3	88.7
հեռագրային կապից	16.5 [♦]	14.8 [♦]	92.6
հեռախոսային խոսակցություններից	32940.8	19031.7	123.9
<i>որից՝ բջջային</i>	9611.8	7991.4	150.9
բաժանորդային վարձերից և միանվագ ծառայություններից	8487.5	5976.1	118.6
<i>որից՝ բջջային</i>	2936.4	2384.4	146.2
ձայնային-լարային ծառայություններից	47.9	42.4	87.5
ինտերնետային ծառայություններից	2133.0	581.3	134.4
այլ ծառայություններից	3820.9	191.8	101.1

Կապի ծառայություններից փաստացի ստացված հասույթի կառուցվածքն ըստ առանձին տեսակների, 2004թ. հունվար-սեպտեմբերին, %




- (1) Բաժանորդային վարձերից, միանվագ ծառայություններից
- (2) Հեռագրային կապից
- (3) Փոստային կապից
- (4) Հեռախոսային խոսակցություններից
- (5) Ձայնային-լարային ծառայություններից
- (6) Ինտերնետային ծառայություններից
- (7) Այլ ծառայություններից

¹ Հաշվարկված է առանց ավելացված արժեքի հարկի:

Կապի ծառայություններ մատուցող կազմակերպությունների հասույթն ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի

	Կազմակերպությունների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Կապի գործունեությունից ստացված փաստացի հասույթը, մլն. դրամ	2004թ. հունվար-սեպտեմբերը 2003թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, համադրելի գներով, %
Ընդամենը	89	12092	48628.2	120.0
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)	47	128	131.5	93.2
6-15 մարդ (փոքր)	21	177	610.0	116.5
16-30 մարդ (միջին)	9	210	1211.9	130.7
31 և ավելի մարդ (խոշոր)	12	11577	46674.8	119.9

Կապի ծառայություններ մատուցող կազմակերպությունների հասույթի կառուցվածքն ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի



Փոստային կապի ծառայությունների ցուցանիշները

	Չափի միավոր	2004 թ. հունվար-սեպտեմբեր	2004թ. հունվար-սեպտեմբերը 2003թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, %
Պարբերական հրատարակություններ (թերթեր, ամսագրեր)	հազ. հատ	6875.0	101.7
Նամակներ, բացիկներ, հասարակ և պատվիրված խաչկապեր	-"	1223.0	103.2
Գնահատված խաչկապեր	-"	6.9	103.0
Սովորական և գնահատված ծանրոցներ	-"	2.6	72.2
Փոստային և հեռագրային դրամական փոխանցումներ	-"	10.5	106.1
Կենսաթոշակների վճարում	-"	2900.0	98.2
Բյուջեով նախատեսված ընտանեկան նպաստներ	-"	1106.0	86.9
<u>Միջազգային փոստափոխանակումներ</u>			
Նամակագրություն (նամակներ, փոստային բացիկներ, խաչկապեր) ելք	կգ	18922.0	117.7
<i>դրանցից՝ ԱՊՀ երկրներ</i>	-"	7134.0	103.2
Ծանրոցներ ելք	հատ	2359.0	67.2
<i>դրանցից՝ ԱՊՀ երկրներ</i>	-"	326.0	143.0

Հաղորդված հեռագրերի քանակը

	2004թ. հունվար-սեպտեմբեր	2004թ. հունվար-սեպտեմբերը 2003թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, %
Հեռագրեր, ընդամենը, հազ.հատ	32.7	96.7
<i>այդ թվում՝</i>		
ներհանրապետական	12.3	95.3
ԱՊՀ երկրներ	20.2	98.1
այլ երկրներ	0.2	66.7

Հեռախոսային կապ: Կանչերով և պատվերներով միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների քանակի ցուցանիշները բնութագրվում են ստորև բերված աղյուսակով.

	2004 թ. հունվար- սեպտեմբեր	2004թ.հունվար-սեպտեմբերը 2003թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, %
Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների քանակը, հազ. միավոր	61224.6	117.3
<i>այդ թվում՝</i>		
ներհանրապետական	52673.5	119.8
միջազգային	8551.1	104.2
որից՝ ԱՊՀ երկրներ	7273.1	102.1

Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների կանչերի ընդհանուր քանակը կազմել է 217062.2 հազ. միավոր, որից ավարտվել են խոսակցությամբ 58129.6հազ. միավոր կամ 26.8 %:

Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների պատվերների քանակը

	2004թ. հունվար- սեպտեմբեր	2004թ. հունվար-սեպտեմբերը 2003թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, %
Միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների պատվերների քանակը, հազ.հատ	4341.9	112.1
<i>այդ թվում՝</i>		
միջազգային	666.1	100.4
ներհանրապետական	3675.8	114.5
<i>որից չեն կատարվել՝</i>		
միջազգային	213.2	116.4
ներհանրապետական	1033.7	142.9

2004թ. հունվար-սեպտեմբերին միջազգային և ներհանրապետական հեռախոսային խոսակցությունների պատվերների ընդհանուր քանակի 15.3%-ը բաժին է ընկել միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերներին (2003թ. հունվար-սեպտեմբերի 17.1%-ի դիմաց), իսկ մնացածը՝ ներհանրապետական: Միևնույն ժամանակ միջազգային հեռախոսային խոսակցությունների պատվերներից չեն կատարվել 32.0%-ը (2003թ. հունվար-սեպտեմբերի 27.6%-ի դիմաց), իսկ ներհանրապետական պատվերներից՝ 28.1%-ը (2003թ. հունվար-սեպտեմբերի 22.5%-ի դիմաց):